

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 1(16/17)

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտ. խորհրդի 05.10.16 թ.կայացած նիստիխորհրդի նիստին մասնակցում էին նրա 34 անդամներից 27-ը :

Օրակարգ`

1. Ֆակուլտետի գիտ. խորհրդի 2016/2017 ուս.տարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկումը և հաստատումը:
Ձեկ.՝ Վ.Ռ. Թադևոսյան
2. Տեղեկատվություն 2016/2017 ուս.տարում ֆակուլտետի բակալավրիատի ու մագիստրատուրայի համալրման մասին:
Ձեկ.՝ պրոֆ., Յու.Լ. Վարդանյան
3. Սույն թվականին առկա համակարգով ասպիրանտուրա ընդունվածների ատենա-խոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատումը:
Ձեկ.՝ ամբ. վարիչներ
4. 2016/17 ուս.տարվա 1-ին կիսամյակի ֆակուլտետի անվանական կրթաթոշակների թեկնածությունների հարցը:
Ձեկ.՝ պրոֆ., Յու.Լ. Վարդանյան
5. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ..

Լսեցին- Ֆակուլտետի գիտ. խորհրդի 2016/2017 ուս.տարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկումը և հաստատումը:

Արտատայտվեցին.- Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին ֆակուլտետի դեկան, պրոֆ. Յու.Լ.Վարդանյանը, պրոֆ. Գ.Հաջյանը և դոցենտ Կ.Մովսիսյանը:

Որոշեցին.- Նախագծում հաշվի առնել կատարված առաջարկները և հաստատել աշխատանքային պլանը:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ..

Լսեցին- Ֆակուլտետի դեկան պրոֆ. Յու.Լ.Վարդանյանի տեղեկատվությունը 2016/2017 ուս.տարում ֆակուլտետի համալրման մասին: Ձեկուցողը թվային տվյալներ բերեց ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի ընդունելությունների

վերաբերյալ: Նշվեց, որ չնայած թափուր տեղեր չունենք, սակայն պետք է աշխատել ուսումնական ծրագրերի արդիականացման ուղղությամբ:

Արտատայտվեցին.- պրոֆ. Խ. Ներկարարյանը, Յու.Ավետիսյանը, Գ. Հաջյանը:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ..

Լսեցին- -Ա. 04.03-“Ռադիոֆիզիկա” մասնագիտությամբ, ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ **Թորգոմ Սամվելի Եզեկյանի** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին- 1) Ասպիրանտ **Թորգոմ Եզեկյանի** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ **« Ռելաքսացման պրոցեսները քվանտային դիսպոլային ճառագայթիչ - մետաղական նանոկառուցվածք համակարգերում »:**

2) Ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել “ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության” ամբիոնի պրոֆեսոր, ֆ.մ.գ.դ. **Խ.Վ. Ներկարարյանին:**

Լսեցին- - Ե.27.01 "Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա" մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ **Անդրանիկ Կամոյի Հայրապետյանի** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին- 1) ասպիրանտ **Անդրանիկ Հայրապետյանի** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ **"Մուտք/Ելք հանգույցներում աղմկակայունության բարձրացման միջոցների մշակումը":**

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել, Սինոփսիս Արմենիա ՓԲԸ ուսումնական դեպարտամենտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր **Վ.Շ. Մելիքյանին:**

Լսեցին- - Ե.27.01 "Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա" մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ **Լևոն Գագիկի Սարյանի** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին- 1) ասպիրանտ *Լևոն Մարթանի* թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ "Տվյալների կրկնակի արագության փոխանցմամբ մուտքի/ելքի հանգույցների մշակումը և հետազոտումը":

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել, Սինոփսիս Արմենիա ՓԲԸ ուսումնական դեպարտամենտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր **Վ.Շ. Մելիքյանին**:

Լսեցին- - Ե.27.01 "Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա" մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ *Արա Էմիլի Մկրտչյանի* թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին- 1) ասպիրանտ *Արա Մկրտչյանի* թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ "Եռաչափ տրանզիստորների հիման վրա թվային տարրերի գրադարանի մշակումն ու հետազոտումը":

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել, Սինոփսիս Արմենիա ՓԲԸ ուսումնական դեպարտամենտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր **Վ.Շ. Մելիքյանին**:

Լսեցին- - «Ա 04.10 – կիսահաղորդիչների ֆիզիկա» մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ **Գևորգ Հարությունի Շահխաթունիի** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին- 1) ասպիրանտ **Գևորգ Շահխաթունիի** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Կիսահաղորդիչ-գազ բաժանման սահմանի հետազոտումը իմպլանտացիայի սպեկտրասկոպիայի եղանակով»:

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել "կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա" ամբիոնի վարիչ, ԶԶ ԳԱԱ ակադեմիկոս **Վ.Մ. Զարությունյանին**:

Օրակարգի 4-րդ հարցի կապակցությամբ..

Լսեցին- ֆակուլտետի 2015/16 ուստարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակների թեկնածությունների առաջադրման հարցը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի ղեկան, ԶԶ ԳԱԱ թղթ. անդամ Յու.Լ. Վարդանյանը, ԱՊՏՖ ամբիոնի վարիչ Գ. Ալավերդյանը, կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի

ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ.Մ. Հարությունյանը, ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի պրոֆ., Խ.Ներկարարյանը:

Որոշեցին- Հաշվի առնելով ուսման գերազանց առաջադիմությունը և գիտահասարակական ակտիվությունը անվանական կրթաթոշակների թափուր տեղերը հատկացնել հետևյալ մագիստրոսներին.

Էմիլ Միրզաբեկյանի անվան կրթաթոշակ

1. Ստեփանյան Դավիթ Զրաչի– մագիստրատուրա, 1-ին կուրս

Ալիխանյան եղբայրների անվան կրթաթոշակ

2. Ղազարյան Գագիկ Արամայիսի- մագիստրատուրա, 1-ին կուրս

Յուրի Բախշյանի անվան կրթաթոշակ

3.Գրիգորյան Տիգրան Օլեգի– մագիստրատուրա, 1-ին կուրս

Յակոբ Զարոբյանի անվան կրթաթոշակ

4.Ներսիսյան Դավիթ Վարուժանի – մագիստրատուրա, 1-ին կուրս

Օրակարգի 5-րդ հարցի կապակցությամբ..

ԼՍԵՑԻՆ.- ԵՊՀ-ի կողմից հայտարարված հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին ֆակուլտետի ուսանողների մասնակցության երաշխավորման հարցը :

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանողներ

Մինասյան Բիլլի Ժան-Լուիի -4-րդ կուրսի ուսանող

Նինոյան Արման Վահեյի-4-րդ կուրսի ուսանող

Աղամալյան Միշա Արթուրի -3-րդ կուրսի ուսանող

երաշխավորել լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար:

Լսեցին- -Ա. 04.10-“Կիսահաղորդիչների ֆիզիկա” մասնագիտությամբ, Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանի «Կիրառական մաթեմատիկայի և ֆիզիկայի» ֆակուլտետի հեռակա ուսուցման 3-րդ տարվա ասպիրանտ **Նարեկ Բաբիկի Մարգարյաի** թեկնածուական թեզի թեմայի վերահաստատման հարցը:

Արտահայտվեցին- ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի “Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա” ամբիոնի պրոֆեսոր **Ֆ. Գասպարյանը**: Նշվեց, որ Նարեկ Մարգարյանը բակալավրիատը և մագիստրատուրան գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ-ն Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա մասնագիտությամբ: 2013թ. ընդունվել է Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանի ասպիրանտուրա, որտեղ նրա թեկնածուական թեզի թեման հաստատվել էր հետևյալ ձևակերպմամբ՝ «Դիէլեկտրիկական սահմանափակմամբ կիսահաղորդչային նանոկառուցվածքներում կոլեկտիվ վիճակների և օպտիկական երևույթների հետազոտումը» (**ղեկ. Ֆ.մ.գ.դ., դոցենտ Կ.Ահարոնյան**): Սակայն ՀՀ ԲՈՀ –ի չափորոշիչների համաձայն անհրաժեշտություն է առաջացել թեման վերահաստատել ԵՊՀ ում:

Որոշեցին- Ասպիրանտ **Նարեկ Բաբիկի Մարգարյաի** թեկնածուական թեզի թեման վերահաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Դիէլեկտրիկական սահմանափակմամբ կիսահաղորդչային նանոկառուցվածքներում կոլեկտիվ վիճակների և օպտիկական երևույթների հետազոտումը»:

**Խորհրդի նախագահ,
ԴԴ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր**

Յու.Լ. Վարդանյան

Գիտքարտուղար

Վ.Ռ. Թադևոսյան